

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

Երիտասարդ հայագէտ պրոֆ. Meyer-ն
Revue critique d'histoire et de littérature 1900,
Avril.-ի համարում՝ հետեւեալն է գրում իւր
հայրենակից և պաշտօնակից հայագէտ պրոֆ.
A. Carrière-ի Les huit Sanctuaires de l'Arménie
payenne d'après Agathange et Moïse de
Khoren (Paris 1899) in 4^o, 29 p. et une Carte).
(Հեթանոս Հայաստանի ութ սրբավայրերը՝ ըստ
Ազաթանգեղոսի և Մ. Խորենացւոյ. Փարիզ.
1899. երկ. Ա. Կարրիեր) շարադրութեան մա-
սին:

Այս բրոշիւրը նուիրուած էր Ch. Sche-
ffer-ի (Խ. Շեֆֆեր) յիշատակին և ներկա-
յացուած Հռոմի արևելագէտաների ժողովին
(1899-ին): Շարադրութեան նպատակն էր
ցոյց տալ, որ Մավակս Խորենացին Լուսաւորչի
դից մեջէանները կործանելու համար յանձն
առած 3 արշաւանքներն առել է Ազաթան-
գեղոսից և ի հարկէ զարդարել, պաճուծել
զանազան մանրամասնութիւններով: Սա ցոյց
է տալիս Խորենացու այս մասին պատմածնե-
րի արուեստական լինելը և մատնացոյց է ա-
նում, որ պատմահայրը իրեն ամենից աւելի
մատնում է արուեստականութեան մէջ նրանով,
որ նա բայցառապէս Ազաթանգեղոսի յունա-
րէն բնագրի յունական անուններն է գործա-
ծում Հայոց տեղերի համար: Այս նկատողու-
թիւնը ի հարկէ մեծ նշանակութիւն ունի
Ազաթանգեղոսի բնադրի քննութեան համար.
ի վերջոյ նա ծաղրում է այն հեղինակներին,
որ այս նիւթի մասին վերջին ասրիներս գրու-
թիւններ են լոյս ընծայել:

8. թ.

Զանազան ծառերի սարքեր սարիվը. — Ինչպէս յայտ-
նի է, ծառերի տարիքը կարելի է բաւականին
ճշտորէն որոշել, եթէ ի նկատի ունենալու լինիքն
նրանց համակենդրոն շրջանակները, որոնք իսկոյն
աչքի են ընկնում: Երբ հորիզոնական ուղղութեամբ
են կտրուած լինում ծառերի թները: Այս տեսա-
կէտով կատարուած գիտողութիւնները զարմանալի
հետեւանքներ են ցոյց տալիս: Այստեղ առաջ ենք
բերում գրանցից մի քանիսը: Բրագիլիայի յայտ-
նի կոկոսի արմաւենիները 600—700 տարուայ ծա-
ռեր են համարում: Երուսաղէմի Զիթենեաց լե-
ան վրայ գտնուող ձիթենու ուժը ծառերը գոյու-
թիւն ունեին, այդ մասին հաստատուն փաստեր
կան, գեռ 1099 թուին, և ուրեմն 800 տարուայ
են: Վալիֆորնիայի „Sequoia Gigantea“ն, որի բնի
շրջապատը 27+21 խսկ բարձրութիւնը 91 մետրի
է հասնում: շատ հաւանական է, որ 1000 տարուց
աւելի հասակ ունենայ: Աղանսնը Ափրիկայի
«Բաօբաբ» կոչուած ծառերից շատերի միջին տարի-
քը 5000 տարի է որոշում: Խսկ Կանգոլն ենթա-
գրում է, որ այն կիպարիսը, որը Չապուլտեպե-
կի (Մեքսիկա) մօտն է գտնուում: գրանցից էլ աւե-
լի մեծ հասակ պիտի ունենայ: Հսկայական փիլիկ
(պոպորտիկ) ծառը, որ Փլորումն է (Չարլոտեն-
բուրգ) գտնուում պէտք է առնուածն 8000 տարե-
կան լինի: Հումբոլդտն հաստատում է, որ Dracoenia
Draco-ն (վիշապածառ) երկրագնդիս ամենահին ժա-
ռանգն է:

* * *

Ճանձեր կուռելու րուպը. — Այդպիսի թուղթ ամէն
մարդ կարող է պատրաստել. Հարկաւոր է միայն
միքիչ մանր ծեծած ու պղպեղ վերցնել, մեղրի հետ
խառնել և ապա ստացած շաղախը քսել վրձինով
զորշ թղթի գրայ ու մի քանի օր թողնել, որ չո-
րանայ: Խսկ Երբ հարկ կլինի գործածել, պէտք է
նորից քաղցր ջրով թրչել այդ թուղթն ու զնել
մի երես պնակի մէջ: Ճանձերն, ի հարկէ, շուտով
գրայ կտան և ձաշակելով անուշ պղպեղը, անմի-
ջապէս կսատկոտեն: Այս միջոցը, որն իր պարզ
կազմութեամբ ամենքին մատչելի է, այն առաւե-
լութիւնն ունի, որ գրա բաղադրութեան մէջ ոչ
մի թունաւոր նիւթ չենք գործ գոնում: